Արձանագրություն N 3

ՀՀՔԿ-ԳՀԱՊՁԲ-18/16 ծածկագրով գրասենյակային տեխնիկայի ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 24 հոկտեմբերի 2018թ.
ժամը 11:30

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	Հ. Բաղինյան
Հանձնաժողովի անդամներ ՝	Տ. Ղուկասյան
	Ս. Զաքոյան
	Գ. Խաչատրյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Ն. Հարությունյան

Բացակայում էր՝

հանձնաժողովի անդամ	Շ. Իսախանյան

1. ՀՀ պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման և առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից պահանջվող փաստաթղթերը ներկայացնելու մասին

(Հ. Բաղինյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ

- ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի (այսուհետ՝ Կարգ) 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հարցում էր ուղարկվել ՀՀ պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ Կոմիտե) առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ <<Սմարթլայն>> ՍՊԸ-ի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ: Կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ստացվել է տեղեկատվություն համաձայն որի՝ մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չունի ժամկետանց պարտավորություններ:

- ՀՀՔԿ-ԳՀԱՊՁԲ-18/16 ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ <<Սմարթլայն>> ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ հրավերով պահանջվող փաստաթղթերի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:

2. Գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին

(Հ. Բաղինյան)

2.1 Հիմք ընդունելով Կարգի 44-րդ կետը և գնահատող հանձնաժողովի կողմից հաստատված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց՝ հաստատել գնանշման հարցման ընթացակարգի մասնակցի հայտի գնահատման արդյունքները և ընտրված մասնակից ճանաչել <<Սմարթլայն>> ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:

3. Պետական գնման պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Հ. Բաղինյան)

3.1 Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը, ինչպես նաև սույն արձանագրության 2-րդ կետով ընդունված որոշումը, պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել <<Սմարթլայն>> ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:

4. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Հ. Բաղինյան)

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել պետական գնման պայմանագիր կնքելու օրվան հաջորդող աշխատանքային օրը՝ ժամը 11:30-ին ՀՀ քաղաքաշինության կոմիտեի գնումների կազմակերպման բաժնում (ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3, IV հարկ, 460 սենյակ):

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Հ. Բաղինյան

Անդամ՝ ---------- Տ. Ղուկասյան

---------- Ս. Զաքոյան

---------- Գ. Խաչատրյան

Արձանագրությունը կազմեց
հանձնաժողովի քարտուղար՝ ---------- Ն. Հարությունյան